

MASTERSEAL NP 474 (MASTERFLEX 474)

Պոլիուրետանի հիմքով, միբադադրիչ, էլաստոմեր, խոնավակայուն հերմետիկ է կարերի համար:

**Բնութագրություն**

MASTERFLEX 474-ը կիրառման համար պատրաստ միբադադրիչ պոլիուրետանային խոնավակայուն հերմետիկ է կարերի համար, բնութագրվում է եղանակային պայմանների, ուլտրամանուշակագույն ճառագայթման և քիմիական ակտիվ նյութերի ազդեցության նկատմամբ կայունությամբ:

Կիրառման ոլորտ

MASTERFLEX 474-ը նախատեսված է՝

- ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շինությունների կարերի հերմետիկացման համար,
- հատակներում ջերմաստիճանային կարերի հերմետիկացման համար,
- պատերում և առաստաղներում ջերմաստիճանային կարերի հերմետիկացման համար,
- մշտապես ջրի տակ գտնվող ջերմաստիճանային կարերի հերմետիկացման համար,
- < 25% շարժունակության ջերմաստիճանային կարերի հերմետիկացման համար,
- ալյումինե, մետաղական, ՊՎԶ և փայտյա միացությունների հերմետիկացման համար:

Առավելություններ

- կիրառման պարզություն,
- բարձր էլաստիկություն, դեֆորմացիայից հետո վերականգնվելու ունակություն,

- բետոնե, քարե, մետաղական, փայտյա և այլ նակերևույթների նկատմամբ գերազանց հարակցում (ադիզիա),
- ջերմաստիճանային տատանումների, մաշվելու և արևադարձային կլիմայի նկատմամբ բարձր կայունություն,
- քաղցրահամ և ծովային ջրի, աղային լուծույթների, կրաքարային ջրի, աղտոտված ջրի, չեզոք և ազրեսիվ մաքրող միջոցների ազդեցության նկատմամբ կայունություն,
- հանքային յուղերի, բուսական և այլ յուղերի նկատմամբ կարճաժամկետ կայունություն,
- ժամանակի ընթացքում չի պնդանում, նույնիսկ -30°C -ից $+80^{\circ}\text{C}$ ջերմաստիճանային պայմաններում,
- չունի ջերմապլաստիկություն (տաքացնելիս չի փափկում),
- ուլտրամանուշակագույն ճառագայթման ազդեցության հետևանքով քայքայման նկատմամբ կայունություն:

Սահմանափակումներ

- Չկիրառել **MASTERFLEX 474**-ը $+5$ -ից ցածր և $+35^{\circ}\text{C}$ -ից բարձր ջերմաստիճանային պայմաններում: **MASTERFLEX 474**-ը խորհուրդ չի տրվում կիրառել՝
- ջրի բարձր ճնշման տակ մշտապես գտնվող լողավազանների կարերի համար,
 - ապակեպատվածքի կոմպենսացման կարերի համար,
 - ներկով պատված շարժուն կարերի համար,
 - ներգործության ենթարկվող կարերի համար,
 - ազրեսիվ քիմիական նյութերի համար:

Կարերի կառուցվածք

Երկարակեցության և որակյալ հերմետիկացման ապահովման համար անհրաժեշտ է ձգտել կարերի լցումն օպտիմալ լայնություն/խորություն հարաբերակցությամբ՝ հավասար 2:1: Դա հատկապես կարևոր է 25մմ լայնությունից ավել կարերի հերմետիկացման դեպքում:

Ծախս

MASTERFLEX 474-ի ծախսը կախված է կարի լայնությունից և վերջինիս լցումն ան խորությունից: Կարի 10մմ լայնության և լցումն ան

10մմ խորության դեպքում ծախսը կազմում է 1գծմ կարի՞ն՝ 100մլ, ինչը թույլ է տալիս մեկ տյուրբիկով հերմետիկացնել 6գծմ:

Կարերի օպտիմալ կառուցվածք

Կարի խորություն	Կարի լայնություն				
	10.0 մմ	15.0 մմ	20.0 մմ	25.0 մմ	30.0 մմ
10.0 մմ	6.00 մ	4.00 մ	3.00 մ		
12.5 մմ				1.92 մ	
15.0 մմ					1.33 մ

* Ձերմությունը ուժեղ կլանող կոնստրուկցիաների դեպքում (մուգ գույն) կարի լայնությունը հարկավոր է ավելացնել 10-30%-ով:
 ** Մշտապես քիմիական ներգործության կամ ջրի մշտական առկայության դեպքում լցումնան խորությունը հարկավոր է ավելացնել 20%-ով:

**Կիրառման ցուցումներ
 Մակերևույթի պատրաստում**

Անհրաժեշտ է կարի պատերից հեռացնել ցեմենտային կաթի, փոշու, յուղի և այլ տեսակի աղտոտությունների հետքերը: Մակերևույթը պետք է լինի մաքուր և պինդ: Խզման ամրության պահանջվող առավելագույն սահմանը պետք է կազմի 1,5ն/մմ²: Կարի խորության կարգավորման և եռակողմ հարակցումը (ադիեզիան) կանխելու համար, մինչև հերմետիկով պատելը, կարի մեջ հարկավոր է տեղադրել ռետինե էլաստիկ լար կամ փակ ծակոտիներով փրփուրով ծածկված պոլիէթիլեն: Տվյալ ընթացակարգի իրականացումը նաև անհրաժեշտ է կարերի արդյունավետ հերմետիկացման ապահովման համար:

Մակերևույթի նախաներկում (грунтовка)

Լավ նախապատրաստած և չոր՝ բետոնից, քարից, մետաղից և ապակուց մակերևույթների վրա **MASTERFLEX 474**-ի պատման դեպքում չի պահանջվում նախնական նախաներկում (грунтовка): Մնացած այլ բոլոր նյութերի դեպքում հարկավոր է կիրառել գրունտային ծածկույթների հետևյալ տեսակները.

- PCI ELASTOPRIMER 135՝ այնպիսի ծակոտկեն հիմքերի համար, ինչպիսին են բետոնը, քարը, սվաղը,

- PCI ELASTOPRIMER 145՝ այնպիսի ոչ ծակոտկեն հիմքերի համար, ինչպիսին են մետաղը, կերամիկան:

Պատում

Հերմետիկը պատվում է կորպուսային շինարարական ատրճանակի օգնությամբ: Տյուրբիկը դնել ատրճանակի մեջ, տեղակայել գլխիկը և կտրել անհրաժեշտ չափով: Կարերի հավասար լցափակում ստանալու համար խորհուրդ է տրվում կարերի ծայրերը սոսնձել մոնտաժային սկոտչով, ինչը պետք է հեռացնել հերմետիկի հարթեցումից անմիջապես հետո: **MASTERFLEX 474**-ը կարելի է կիրառել ուղղաձիգ և հորիզոնական մակերևույթների վրա մինչև կարերի 30մմ հաստության դեպքում: Կարի ավելի լայն լինելու դեպքում սկզբից **MASTERFLEX 474**-ը պատվում է կարերի կողքերով և լավ ծեփվում է՝ բավարար շաղկապում ստանալու նպատակով: Դրանից հետո ամբողջությամբ լրացվում է կարերի հատումը: Մակերևույթը հարկավոր է հարթեցնել համապատասխան գործիքով:

Փաթեթավորում

MASTERFLEX 474-ը թողարկվում է 600մլ-անոց փափուկ տյուրբիկներով (1 տուփի մեջ 20տյուրբիկ):

Պահպանման պայմաններ

Պահպանել գործարանային փաթեթավորմամբ, չոր վայրում, +5°C - +25°C ջերմաստիճանային պայմաններում:

Տեխնիկական բնութագրեր

Նյութի հիմքը	օդի խոնավության հետ շփվելիս պնդացող պոլիուրետան
Խտություն	~ 1,3գ/սմ ³
Կարերի լայնություն	5-ից 30մմ
Կիրառման ջերմաստիճան	+5-ից +35°C (հիմքի ջերմաստիճան)
Ջերմակայունություն	-30-ից +80°C
Հասունացման ժամկետ* - թաղանթի գոյացում - հետիոտնային բեռնվածություն - տրանսպորտային բեռնվածություն	~ 45 րոպե հետո ~ 24 ժամ հետո ~ 4 օր հետո
Երկարացում մինչև պատռվելը (ISO 8339)	մինչև 450%
Վերականգնվելու ունակություն	մինչև 80%
Մշտապես ընդարձակվելու հնարավորություն	~ 20%
Պնդություն ըստ Ա Շոռի	~ 30
Էլաստիկության մոդուլ 20°C-ի դեպքում (ISO 37)	~ 0,45 Ն/մմ ²

* +23°C ջերմաստիճանային պայմանում և օդի 50% հարաբերական խոնավության դեպքում: Առավել բարձր ջերմաստիճանները կրճատում են, իսկ առավել ցածրները՝ ավելացնում վերը նշված ժամանակահատվածը: